

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

21.11.2023թ. կայացած նիստի

թիվ 2 արձանագրություն

Օրակարգ

1.2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի սոց.հարցման արդյունքների քննարկում:

2. Ուսանողների արտադրական պրակտիկայի ընթացքի քննարկում :

3.Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների քննարկում:

4.2023-2024

ուստարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատում:

5. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

6. Ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփում:

Գիտխորհրդի թիվ 2 նիստին 36 անդամներից ներկա էին 34-ը:Նիստին ներկա էին նաև ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը և գիտքարտուղար Մ. Հովհաննիսյանը: Գ.Բարսեղյանը ողջունեց ներկաներին և խոսքը փոխանցեց պ-ն ռեկտորին: Հ. Հովհաննիսյանը որոշ մանրամասներ ներկայացրեց համալսարանում կատարված և սպասվող բարեփոխումների մասին՝ տարբեր ոլորտներին առնչվող, ինչպիսիք են՝ կրթական, կազմակերպչական, արցախցիների տեղավորման, աշխատավարձի փոփոխության, միջազգային ծրագրերի ներմուծման, առողջապահական ապահովագրության փաթեթին վերաբերող հարցերը: ԵԼՀ ֆակուլտետի ուսանողներն ու դասախոսները բազմաբնույթ հարցեր ուղղեցին ռեկտորին և ստացան սպառիչ պատասխաններ:

Այնուհետև Գ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցհարցման արդյունքների քննարկմանը: Դեկանը նշեց,

որ ընդհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ են, բայց նշեց նաև, որ ակնկալում է ավելի բարձր ցուցանիշներ, քանի որ որոշ մասնավոր դեպքերի պարագայում ցածր ցուցանիշներ են գրանցվել:

Դեկանը անդրադարձավ նաև օրակարգի երկրորդ հարցին՝ ուսանողների արտադրական պրակտիկայի ընթացքի քննարկմանը: Խոսքը փոխանցվեց փոխդեկան Մ. Յադուբյանին, որը հանգամանալից նարկայացրեց պրակտիկային առնչվող հարցերը և հավելեց, որ ընդհանուր առմամբ նշված գործընթացը անցել է բնականոն հունով:

Անդրադարձ կատարվեց նաև օրակարգի երրորդ հարցին՝ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների քննարկմանը: Ամբիոնի վարիչները վստահեցրին, որ ամեն ինչ ընթանում է՝ սահմանված նորմերին համապատասխան:

Օրակարգի հինգերորդ հարցը առնչվում էր **ասպիրանտների և հայցորդների** ատեստավորմանը, ինչպես նաև **մեկ** հարց՝ **դոցենտի կոչման ներկայացնելու և մեկ մենագրության** հաստատման հարցերը:

1. Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. **Արա Հրաչիկի Առաքելյանի** «Միջնադարյան Եվրոպայի էպոսը. պատմություն, առասպել և պոետիկա» մենագրության տպագրության երաշխավորության հարցը:

Արտասահայտվեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Ա. Մեդրակյանը, ներկայացնելով աշխատանքը, նշեց, որ այն չափազանց ուշագրավ է, ծավալով 350 էջ է: Մենագրությունն ուսումնասիրում է միջնադարյան արխայիկ էպոսի զարգացման փուլերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում, տրվում են գրականագիտական պատմական և ժամանակակից վերլուծություններ:

Որոշեցին՝ Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Արա Առաքելյանի՝ «Միջնադարյան Եվրոպայի էպոսը. պատմություն, առասպել և պոետիկա» մենագրության տպագրությունը՝ խմբագիր հաստատելով պրոֆեսոր, բ. գ. դ., Կառլեն Մատինյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վարդուհի

Սուրենի Ղումաշյանին՝ դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆեսոր Ս.

Գասպարյանը ներկայացրեց ամբիոնի ասիստենտ, Բ.գ.թ. Վարդուհի

Ղումաշյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու գործընթացին

մասնակցելու համար: Վ. Ղումաշյանը աշխատում է ԵՊՀ-ում 2002 թվականից, պաշտպանել

թեկնածուական ատենախոսությունը 2010 թվականին: Հեղինակ է 14

գիտական և գիտամեթոդական աշխատանքների, որոնցից 8-ը հրատարակվել են

պաշտպանությունից հետո: Կատարված աշխատանքը բավարար հիմք է թույլատրելու

Վ. Ղումաշյանին մասնակցել դոցենտի գիտական կոչման ներկայացնելու գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, Բ.գ.թ.

Վարդուհի Ղումաշյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու

գործընթացին մասնակցելու համար: Որոշումն ընսունվեց միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի

Գագիկի Միրիջանյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ. գ. դ., պրոֆեսոր

Ս. Գասպարյանը, ներկայացնելով ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանի կատարած

աշխատանքը (գիտ. ղեկավար՝ *պրոֆեսոր Գ. Մուրադյան*), նշեց, որ գրվել է վեց գիտական

հոդված, որոնցից չորսը տպագրված են, հինգերորդ հոդվածը հանձնված է ստուգման:

Հավելվեց, որ հայցորդը հանձնել է բոլոր ընթացիկ քննությունները՝ հավաքելով բոլոր

անհրաժեշտ կրեդիտային միավորները: Հայցորդը ավարտել է նաև **«Իրավաբանական**

փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական հաղորդակցական լույսի ներքո»

թեմայով գիտական աշխատանքի առաջին, երկրորդ և երրորդ գլուխները, որոնք են՝

1. Պաշտոնական ոճը գործառական ոճերի համակարգում,

2. Թարգմանության խնդիրները (համընդհանուր) գիտական և պաշտոնական ոճում,

3. Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության (մշակութային) խնդիրները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով անգլիական բանասիրության ամբիոնի

հայցորդ Վարդուհի Գագիկի Միրիջանյանի կատարած աշխատանքը՝

ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա

Ավետիսյանի ատեստավորման հարցը՝ «Բույսերի եվ կենդանիների անուններով ոճական հնարները Ջերալդ Դարելի ստեղծագործություններում (խտալերենի զուգադրությամբ) թեմայով(գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Ս. Գասպարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ. Գ. Պ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը, ներկայացնելով ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանի կատարած աշխատանքը հաշվետու տարվա ընթացքում, (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Ս. Գասպարյան), նշեց, որ նա ուսումնասիրել է Ջերալդ Դարելի ստեղծագործություններից երկուսը՝ «My Family and Other Animals» և «The Whispering Land» վեպերը:

Ուսումնասիրելով բնագետ Ջերալդ Դարելի ստեղծագործությունները, ինչպես նաև նրա կենսագրության որոշ փաստեր՝ անհնար է եղել չնկատել դրանց դերը բնության, բուսական և կենդանական աշխարհի, էկոհամակարգի պրոպագանդման եվ պահպանման գործում, ինչն էլ բերել է այն կարծիքին, որ Ջերալդ Դարելի ստեղծագործությունները կարող են դիտարկվել այսօր արդեն աստիճանաբար լայն տարածում ստացող, այսպես կոչված էկոլոգիկականության դաշտում: Ուսումնասիրվել է նաև թվով տեսական գրականություն՝ նվիրված ոճագիտությանը և ոճական հնարներին:

Հաշվետու տարում հայցորդը մասնակցել է բոլոր կրեդիտային դասընթացներին և լրացրել դասընթացների համար սահմանված 32 կրեդիտը: Այժմ հայցորդը աշխատում է հոդվածի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ. Գ. Պ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդ Սրբուհի Տիգրանի Մինասյանին (գիտ. ղեկավար՝ Բ. Գ. թ., պրոֆեսոր Ա. Չուբարյան), նշելով, որ հաշվետու ժամանակահատվածում քննվել և վերլուծության են ենթարկվել «Հաճոյախոսությունը որպես լեզվագործաբանական քննության առարկա» թեմայով ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ: Տեսականորեն ուսումնասիրվել է հաճոյախոսության դերն ու տեղը միջանձնյա փոխհարաբերություններում:

Աշխատանքի գործնական մասում ուսումնասիրելու է քաղաքավարության կատեգորիայի գործառույթը խոսք ընկերների խոսքային փոխազդեղության ժամանակ և բացահայտելու է քաղաքավարության սկզբունքի ազդեցությունը հաճոյախոսության լեզվական միջոցների ընտրության վրա: Քննվելու է «խրախուսանք» հասկացության իմաստային, գործաբանական դաշտը: Ուսումնասիրվելու է այն գործաբանական և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են հաջող հաղորդակցմանը և վերլուծելու է հաճոյախոսություն խոսողական ակտը սոցիալ-հոգեբանական և հաղորդակցական դերերի տեսանկյունից՝ որպես ուսումնասիրության բուն նյութ օգտագործելով անգլերեն դիսկուրսում տեղ գտած երկխոսական միավորները: Կրեդիտային դասընթացներից հայցորդը մասնակցել է «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» դասընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով անբիռնի հայցորդ Սրբուհի Մինասյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Մարինե Ալբերտի Էվոյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը, ներկայացնելով հայցորդ Մարինե Ալբերտի Էվոյանի աշխատանքը (գիտ. դեկավար՝ բ. գ. թ., պրոֆեսոր Ա. Չուբարյան), նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում քննվել և վերլուծության են ենթարկվել «Միջանկյալ կառույցները՝ որպես անգլերեն դիսկուրսի ձևավորման միջոց» թեմայով ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ և այլ գիտահետազոտական աշխատանքներ: Աշխատանքի տեսական մասը պատրաստ է, որտեղ ներկայացված են աշխատանքի քննության առարկա հանդիսացող միջանկյալ կառույցների գործառույթներին վերաբերող հիմնական տեսական դրույթները: Աշխատանքի գործնական մասում ուսումնասիրելու է միջանկյալ կառույցների տեքստակազմիչ և ոճակազմիչ դերն ու նշանակությունը անգլերեն դիսկուրսում՝ ըստ կառուցվածքային, շարահյուսական, հնչերանգային և գործաբանական գործառույթների: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել և մասնակցում հետևյալ առցանց դասընթացներին՝ «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով անգլիական բանասիրության անբիռնի հայցորդ Մարինե Ալբերտի Էվոյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ւնդունվեց միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիռնի հայցորդ Աննա Գրիշայի Սարգսյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիռնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացնեց ամբիռնի հայցորդ (Ռոմանագերմանական լեզուներ Ժ.02.07 մասնագիտությամբ) Աննա Գրիշայի Սարգսյանի կատարած աշխատանքը՝ (գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Քրիստինե Հարությունյան)՝ նշելով, որ «Լեզու— գենդեր հարաբերակցության հանրալեզվաբանական ուսումնասիրությունը ամերիկյան հեռուստաշարքում (հայերենի զուգադրությամբ)» թեմայի հրամանագրվելուց հետո մասնակցել է 2023 թ. գարնանային կիսամյակի կրեդիտային դասընթացներին՝ «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Անգլերեն լեզու», « Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Անձնային աճ և ինքնակարգավորում»: Հայցորդը հավաքել է 8 կրեդիտ պարտադիր դասընթացներից և կրեդիտ ընտրովի դասընթացներից: Այժմ մասնակցում է 2023 թ. աշնանային կիսամյակի համար նախատեսված կրեդիտային դասընթացներին: Ղեկավարի հետ համատեղ Armenian Folia Anglistika-ի տպագրության են ներկայացրել առաջին հոդվածը՝ «Գենդերլեկտի հանրալեզվաբանական առանձնահատկությունները «Էմիլին Փարիզում հեռուստասերիալում»: Աշխատում է նաև փաստական նյութի վրա, կատարում վերլուծություններ, օրինակների հավաքագրում և ուսումնասիրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով անգլիական բանասիրության անբիռնի հայցորդ Աննա Գրիշայի Սարգսյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

8. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիռնի հայցորդ Վարդուհի Արթուրի Ղուկասյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիռնի վարիչ, բ.գ. դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց հայցորդ Վարդուհի Արթուրի Ղուկասյանի կատարած աշխատանքը (գիտ. ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Աննա Տարիելի Կնյազյան)՝ նշելով, որ «Դիվանագիտական դիսկուրսի լեզվաոճական բնութագիրը» թեմայով գիտական աշխատանքը գրեթե ամբողջովին պատրաստ է: Այն նվիրված է դիվանագիտական ենթաոճի

առանձնահատկությունների լեզվահաղորդակցական նկարագրությանը դիվանագիտական փաստաթղթերի, մարտավարությունների և ռազմավարությունների մակարդակում և թվային դիվանագիտության մեջ: 2022թ. լույս է տեսել հոդված. *Դիվանագիտական փաստաթղթերի դիսկուրսային բնութագիրը* «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսում: 2023թ. լույս է տեսել հոդված «*Դիվանագիտական տերմինների առանձնահատկությունները*» Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր» պարբերականում: Ներկայումս տպագրության է հանձնվել «*Մեղմասությունները ժամանակակից դիվանագիտական դիսկուրսում*» հոդվածը «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսում: Հավելվեց նաև, որ հայցորդը մասնակցել է կրեդիտային համակարգի կրթական բաղադրիչով նախատեսված պարտադիր և ընտրովի դասընթացներին, ունի անհրաժեշտ 32 կրեդիտները: Հանձնել է մասնագիտական մինիմումները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Արթուրի Ղուկասյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

9. ԼՍԵՑԻՆ՝ Գերմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Քոչարյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Թ.դոցենտ Գ. Սավոյանը, ներկայացնելով ասպիրանտի կատարած աշխատանքը, նշեց, որ Ք. Քոչարյանի ատենախոսության թեման է «Մշակութային իրողությունների իրացումը երկխոսություններում (գերմաներենի, անգլերենի և ռուսերենի նյութի հիման վրա)» դեկ. Բ.Գ.Թ. դոց. Էլզա Ղազարյան: Նշվեց նաև, որ Ք. Քոչարյանը հավաքել է համապատասխան առարկայական կրեդիտները, ծանոթացել է հարկավոր մասնագիտական գրականության հետ, ուսումնասիրում է ատենախոսությանը վերաբերող գիտական տվյալները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել գերմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Քոչարյանին՝ ատեստավորման: Որոշումն ընդունվեց միաձայն:

10. **ԼՄԵՑԻՆ**՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ **Լուսինե Հովիկի Ջանինյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՆՍՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոցենտ Ա. Մեղրակյանը նշեց, որ Լուսինե Ջանինյանը տիրապետում է անգլերենին, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու ժամանակակից անգլո-ամերիկյան գրականությունը, ունի տպագրված հոդված «Գրականության արդի խնդիրներ» գիտական ամսագրում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Լուսինե Հովիկի Ջանինյանի թեկնածուական ատենախոսությունը **«Սև հումորի դրսևորումը Ֆ. Ռոթի ստեղծագործություններում, «Մեռնող կենդանին» վեպում»** վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ՝ գիտական ղեկավար հաստատելով **Բ. Գ. Թ., դոցենտ Անուշ Ռոստոմի Մեղրակյանին:** Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի վերջին հարցը ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփումն էր: Որոշ ամբիոնների վարիչներ տեղեկացրին, որ չեն հասցրել հավուր պատշաճի ապահովել այդ գործընթացը, սակայն վստահեցրին, որ կկազմակերպեն դասալսումներ հնարավորինս արագ ժամկետներում:

ԵԼՀ ֆակուլտետի
ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝



Մ.Դալայան

21.11.2023թ